ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 159/42-Լ «26» 08 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ (ՄՈԳ) ՇԵՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի սովորողներին ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով, ղեկավարվելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4.3-րդ կետի, «Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման» կանոնակարգի 22-րդ կետի, և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետի, ԵՊՀ ռեկտորի 08.02.2022թ. թիվ 25/2 - Լ հրամանի պահանջներով.

հրամայում եմ.

1. Երևանի պետական համալսարանում 2025-2026 ուսումնական տարվա համար միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը սահմանել.
   - Բակալավրիատի բոլոր կուրսերում՝ 13.00
   - Մագիստրատուրայի բոլոր կուրսերում՝ 16.00
2. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ սովորողներին և աշխատողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ